

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԷ ԵՒ ՅՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

Ստորեւ բերում ենք Հրաչեայ Անտեսանի երկու նամակ՝ ուղղուած Նիկողայոս Մատին՝ «Հայերէն արմատական բառարան»ի վերաբերեալ, ինչպէս նաեւ Գրիգոր Խալաբեանցի կարծիքը նոյն մեծարժէք բառարանի մասին: Այս գրութիւնները ժամանակին արտանկարել ենք Լենինկրատի Գիտութիւնների Ակադեմիայի դիւանի Նիկողայոս Մատի «կարիւնետ»ի բնագրերից, որոնք գրուած են Հ. Անտեսանի ձեռքով: Առաջին նամակի համարն է B 1343, Բերք 4, երկրորդինը B 1343, Բերք 8, Գրիգոր Խալաբեանցի կարծիքինը B 1343, Բերք 6:

Կարծում ենք, որ այս նամակները եւ Գր. Խալաբեանի կարծիքը «Հայերէն արմատական բառարան»ի մասին՝ առաջին անգամն են հրատարակուելու: Գրանք կարելոք տեղեկութիւններ են հաղորդում բառարանի տպագրութեան պատմութեան մասին:

Երեւ գրութիւններն էլ տպագրում ենք առանց որեւէ փոփոխութեան:

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԿԱՄԱԿ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ
 ԵՒ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԲԵԱՆՑԻ ԿԱՐԾԻՔԸ
 «ՀԱՅԵՐԷՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

19 յունիսր 1907, Նոր-Բայազիտ

Մեծագատիւ Տէր Ուսուցչապետ

Պր. Նիկոյա Մատ,

Համաձայն Ձեր առաջարկութեան այսօր ուղարկելու պատիւն ունիմ Ձեզ իմ Արմատական Բառարանից ճիշտ ու ճիշտ երես առ երես արտագրած 52 երես, որի մէջ մտնում են է, Ը, Ժ, Խ տառերը ամբողջովին և մի քիչ էլ Լ տառից: Կարծում եմ, ինչպէս Գուք եւս տակ էք, այսչափը կարող կը լինի գաղտնար մը տալ ամբողջ աշխատութեան մասին, որու վրայ հարկ եմ համարում տալ հետեւեալ տեղեկութիւնները:

Աշխատութիւնը պարունակում է 2080 մեծ երես, ճիշտ նոյն մեծութեամբ եւ ձևով, ինչպէս ուղարկուած մասը: Գործիս մէջ մտցրել եմ Նոր Հայկազեան Բառարանի (ՆՀԲ), Հին Հայկազեանի [Միսիմար Արբայի] (ՀՀԲ), Առձեռնի (ԱԲ), Պոլլա հրատարակուած երկհատոր մեծ Փէլախիմայճեան Բառարանի (ՓԲ), Հայր Ալիշանի Հայրուսակի (Հրուս.) մէջ գտնուած բոլոր բառերի արմատները: Ամէն մի բառի կամ արմատի վրայ խօսուած է այսպէս.

1. Նախ տրւում է արմատը կամ բառը, նշանակութիւնը, նրանից ծագած զլխաւոր ձևերը, անանցումների մէջ ստացած կերպարանափոխութիւն-

ներք, արժատի և անանցների գործածուած տեղերը՝ աշխատելով ջոկել միշտ հնագոյնները :

2. = նշանով նշանակուած է բառի գիտնականապէս ընդունելի մեկնութիւնը՝ որքան կարելի է պարզ ու մանրամասն . այս մեկնութեանց մեծագոյն մասը արդէն գիտութեան մէջ ընդունուած և հաստատուն է , ոմանք ոմանց կողմէ կասկածելի , բայց այլոց կողմէ ընդունելի են , իսկ մի քանիսն էլ իմ մեկնութիւններն են խիստ զգուշաւոր կերպով արուած : Եթէ նոյն մեկնութիւնը Հիւրշման Armenische Grammatik—ի մէջ ընդունած է , նշանակուած է նրա էջը , եթէ չէ ընդունած , չէ նշանակուած :

3. Ստուգարանութեանց պատմութիւնը . այս մասը ամէնից զժուարն էր , գուցէ ամէնից էլ նուազ կարեւորը . սակայն ևս կարեւոր համարել եմ դ'էն և տասնեակ տարիներով ամէն մի գիրք ու թիւրթ պրոպետիւրով քաղել եմ բոլոր այն տեղեկութիւնները , ծուռ ու սխալ մեկնութիւնները , ճիշտ կամ թիւր բնուորարանութիւնները որ բանասէրները կամ լեզուաբանները տուել են այն բառի մասին : Այսպէսով իմ աշխատութիւնը լինուած է կատարելալ ամփոփուած բոլոր ինձնից առաջ հրատարակուած լեզուաբանական գործերի . և այդ աշխատութիւնները նորից աչքից անցկացնելու ալիւս կարիք չի մնում : Այս բովնում ևս աշխատում եմ ամէն ինչ հերթով , հրատարակութեանց կարգով անել և ցոյց տալ թէ ո՛վ է բառին առաջին մեկնիչը : Այս մասը պիտի տպուի մանր տառերով , իբր գրքի ամբողջութիւնից դուրս : Եթէ Հիւրշման չէ ընդունած նախորդ (թիւ 2) մեկնութիւնը , իր պատճառարանութիւնները այստեղ կը նշանակուին :

4. «Գու» . համառօտագրութեամբ դնում եմ բառի այն դանազան ձևերը որ ստացել է մեր զանազան բարբառների մէջ . աշխատութեանս մէջ զուք կը տեսնէք հետեւեալ բարբառները . Պօլիս , Ասլանբէկ (Նիկոմիդիոս) , Զէթուն , Տիխիս , Ազուլիս , Գորիս , Ղարաբաղ , Վան , Ողմի , Սուշափա (Աստուրիս) , Սարբերդ . այս բարբառներն ունէի աշխատութիւնս գրած ժամանակ . բայց յետոյ կազմել եմ նաև Մարաղա (Պարսկաստան) , Տրապիզոն , Կարին , Երեւան , Նոր—Նախիջևան և մասամբ Մուշ և Ալաշկերտ : Բոլոր այս 18 բարբառների բառարանը ևս իմ ձեռքովս կազմել եմ անձամբ տեղացիների հետ աշխատելով , հարցնելով կամ մէջնները ասելով : Այս մասը կը լինի իմ գրքի լատագոյն նորութիւնը . արտասանութիւնը բոլորովին ճիշտ նշանակուած է՝ հին ստուգարանութեամբ :

5. Փոխ . համառօտագրութեամբ նշանակում եմ բոլոր այն բառերը որ այս կամ այն լեզուն մեղնից պերցրել է . ինչպէս են Վրացերէն , Թուրքերէն , Լապերէն , Մինդրելիերէն , Թուրքերէն , Թուրքերէնի բարբառներ , ինչպէս և թրքախօս հայոց գործածած ձևերը ևն . ևն . :

Կարող է պատահել որ սոյն 1-5 կէտերից մի քանիսը չդանուին , այդ դէպքում շեն նշանակում . եթէ օրինակ 4 (Գու .) ձևեր չկայ , նշա՛նակում է թէ այդ բառը մեռել է և այժմ ոչ մի բարբառում չի գործածուած : Եթէ 2ր չկայ , նշան է թէ գիտութեան յարանի չէ նոյն բառի մեկնութիւնը ևն . :

Նամակիս հետ ներփակեալ ուղարկում եմ նաև Պր . Գր . Սալաթեանցիի վկայականի պատճէնը* : Աշխատութիւնս , ինչպէս գիտէք , յանձնել էի ձեռմարան և տեսուչը ուղարկել էր Պր . Սալաթեանին քննութեան . Պարտըր ուղարկել էր նոյն նամակը , սրի պատճէնը ինձ ուղարկուեց . այդ պատճէնի պատ-

* Տե՛ս ստորև :

ձէնք պատիւ ունիմ ուղարկելու : Նրա մասին հարկաւոր եմ համարում անել հետեւեալ նկատողութիւնները .

Պր. Սարաթեանի քննադատած թիւ 1 կէտը՝ թէ վերջերուստ տպուած գրքերի բառերը չեն աւելում , այժմ լրացած է . որովհետեւ առանձին տետրակ եմ կազմել այդ բառերից եւ տպագրութեան ժամանակ կը ներմուծեմ : 2- Գրքում է թէ Լըրեմն շատ բնդարձակ է եւ օրինակ տրուած է Արտախոյր . խկապէս այդ բառը շատ բնդարձակ է (6 երես) , բայց միակ օրինակն է սա , որովհետեւ այս բառի մասին եւ «Տենչայր Սաթեանի տիկին» հատուածի վրայ եւ եւս պատշաճ եմ համարել տալ իմ բացատրութիւնները : 3- Հարկ չկայ , սուտում է , ամէն անգամ ՆՇԻՐ բացատրութիւնները գնելու : —Բայց քանի որ իմ նպատակն էր տալ ստուգարանութեանց պատմութիւնը , պարտական էի նաեւ սրանց անտես չանել , ինչպէս գնում եմ միշտ Հիւնքարայէլէնտեանի Ստուգարանական Բառարանի (ՍԲ) բոլոր այլանոցակ բացատրութիւնները՝ իրոս համառօտ կերպով : 4- Ճիշտ է Պր. Սարաթեանի նկատածը թէ ամէն անգամ աշխատել եմ հնդկերոպական բառերի բոլոր քոյր ձևերը գնել . այս եւս դիտարեալ է եւ նպատակ ունի ցոյց տալու թէ բոլոր քոյրերի մէջ հայերէնը ինչ ստաիճան հաւատարմութիւն է ցոյց տալիս : Տղադրութեան ժամանակ կարելի է , եթէ հարկ կայ , սոցանից մի քանիսը կրճատել :

Նկատելի են այն մի խումբ նշաններ՝ որ բառերի սկիզբը գրուած են . որանք բառի մասին շատ դադափար տալու համար են . † նշանակում է թէ բառը մաքուր հայ ձև է՝ հնդկերոպական արմատից . * նշանակում է փոխառեալ յունարէնից , պարսկերէնից , ասորերէնից կամ մի ուրիշ լեզուից . † ցոյց է տալիս թէ բառը հայկական չէնք է . օր . բնկեր որ կազմուած է ընդ եւ կեր (միասին ուսող) բառերից , ստացել է † նշանը : նշանից դուրի բառերը անյայտ են :

Ներկայացնելով այս բոլոր դիտողութիւնները եւ տեղեկութիւնները , պատիւ ունիմ ի վերջոյ յայտնելու թէ ձեմարանի վարչութիւնը այժմ աւելի քան առաջ արամադիր է * կտակի գումարը նախապէս յանձնելու եւ կարգադրելու տպագրութեան գործը : Որովհետեւ , ինչպէս յայտնի է Ձեզ , կտակն այնպէս է կազմուած որ աշխատութիւնը տպագրութիւնից յետոյ միայն կարող է ստանալ գումարը , իսկ ես այս ահռելի հատորի տպագրութեան համար միջոցներ չունենալով՝ խնդրում էի որ ձեմարանը աշխատութիւնը կտակի արժանի գտնելուց յետոյ (որ կարող է լինել միայն այն դէպքում երբ կ'ստացուի Ձեր հաւանութիւնը) , իր ձեռքով յանձնէր Էջմիածնի տպարանին եւ կտակի գումարից վճարէր բոլոր ծախսերը : Կտակի գումարը հազիւ բուէ տպագրութեան :

Յուսարով որ պատիւ կ'ունենամ շուտով լսել Ձեր նպատաւոր կարծիքը , որով միայն պիտի վճարուի կտակին արժանի լինելու հարցը

Մնամ

խոնարհ յարգանք
Հ. Յ. Աճառեան

Հասցէս՝ Հ. Աճառեան , Նոր-Բայազիտ (սուսերէն) [մինչեւ յունիս 20]

*) Այս բարի տրամադրութիւնը է շնորհիւ արդի Տեսուչ Մեսրոպ Վարդապետի . ուստի յոյժ ցանկալի էր ինձ համար որ մինչեւ արդիլ ամիսը աշխատութեան մասին ամէն ինչ կատարուած ու տպագրութեան յանձնուած լինէր :

Առ Մեծարարոյ տեսուչն Գլխորդեան Հոգեւոր ձեմարանի

Պ. Կարապետ Կոստանեանց

ի Ս. Էջմիածին

Մեծարատիւ Տէ՛ր,

Համաձայն անցեալ Մայիսի 11ին ինձ ուղղած ձեմարանից Տեսուչ՝ Ձեր նախորդ արժանապատիւ Հ. Կարապետ վարդապետի գրութեան Պ. Հ. Աճառեանի «Արժաստեան Բառարանի» վերաբերմամբ, որ ուղարկուած էր ինձ աչքէ անցնելու, պատիւ ունիմ այսու իմ կարծիքս յայտնելու այդ աշխատութեան մասին:

Նախ՝ պակասում են բառարանում, որչափ ևս կարողացայ դիտել, բառական թուով բառեր, որ պատահում են վերջին տարիներում լոյս տեսած հին գրականութեան վերաբերեալ մի քանի կարեւոր գրուածքներում: Պ. Աճառեանի ուշադրութիւնն եմ հրաւիրում այդ բառերից մի քանիսի վրայ:

— ա. Փիլոսոփ (Վեներաբել 1892) ազրախուղը (57), անպոսին (57), բարձրութիւն (57), նազարարութիւն (244), սարա (125) ևւն:

— բ. Եղիշիան Կիոյր. (Բաղմալկոյ 1893 Գեկաւ.) աճարոյնիկ, բանկայ, դակուէնիք ու դակուէնք, յուզանալ, սղթոց, սղկա, նոզկայ, մարհիլ (գուցէ նոյն ընդ մարիկոյ), սեկայ, մեկայ ևւն. էջ 573-576:

— գ. Անան. Շիրակացի (Ս. Պետ. 1877) զկարամուր (57), մեծաւոր դոտի (65), շարասոց (72) ևւն:

— դ. Սոկրատ (Վաղարշ. 1897) բախ, աւճուն (262), աղբար (224), ղենակ (225), զորհասէր (265), հմութիւն (անդթութեան իմաստով, 247), պրատ (134), տակու (267), փարթարամ ևւն: Եւ շատ յաճախ— Երասրելի փրաքսրելի:

— ե. Գիրք Մնացորդաց (Մոսկուա 1899) զմճեալ, քակքով, քեփար, պատճարնել, սոնջեակայք, փստտակ տոպայ ևւն: Տես յառաջար.

Երկրորդ՝ մի քանի բառերի առթիւ աւելի ընդարձակ քննութիւն է դեռ տեղած, քան այդ կարող է թոյլ տալ բառարանի ծառայը ևւ բնաւորութիւնը. օր. «արտասոյց»:

Երրորդ՝ հաղիւ թէ հարկ կայ ամէն անգամ մէջ բերել ն. Հայկ. Բառարանի անյաջող բացատրութիւնները. օր. «կանթեղ»:

Չորրորդ՝ հաղիւ թէ անհրաժեշտ է՝ ո՛ր ևւ է հայերէն բառի Հնդեւրոպական բոլոր քոյր բարբառների նոյնանիշները յառաջ բերել. օր. եղբայր:

Եզրակացութիւն. Չր նայած Պ. Հր. Աճառեանի աշխատութեան մի քանի պակասներին ևւ այլ մանր թերութիւններին, որ անխուսելի ևւ այսպիսի մեծածառալ գործի մէջ, չր նայած մի շարք բառերի փիճելի բացատրութիւններին ու համեմատութիւններին, որ կարող ևւ դեռ լրացուիլ ու բարեփոխուիլ, — Հեղինակը՝ որ կարեւորագոյնն է, կանգնած է լեզուապատեան ուղիղ ճանապարհի վրայ ևւ բացի իւր ուսումնասիրութիւններից օգտուել է լուրջ կերպով բոլոր նշանաւոր հայ ևւ օտար լեզուաբանական հետազոտութիւններից, որոյ նորա «Արժաստեան Բառարանը» մի գնահատելի ևւ խիստ կարեւոր գործ է հանդիսանում մեր գրականութեան մէջ. ուստի ևւ նորա հեղինակը, որ երկար տարիներ է նուիրել այս ընդարձակ աշխատութեան,

միանգամայն արժանի է քաջալերութեան և խրախուսանաց, իսկ նորա գործը՝ տպագրութեան լոյս առնելու :

Սպասելով Ձեր անօրինութեան՝ թէ ո՞ւր և ո՞ւմ ուղարկելու է «Բա-
տարանը»

Մնամ անկեղծ յարգանքօք

Գր. Խարաթեանց

Ուսուցչապետ Լազարեան ձեմարանի

1908 Հոկտ. 8

Մեծարգոյ Ուսուցչապետ

Պր. Ման,

Հ. Գալուստը գրել էր ինձ այն տեսակցութեան մասին որ ունեցել էք Ս. Էջմիածնում իմ Արմատական Բառարանի տպագրութեան մասին Պետեր-
բուրգի Կայսերական Ակադեմիայի կողմից : Այս մասին աւելի որոշ պայման-
ների համար նա խորհուրդ էր տալիս՝ դիմել անձամբ Ձեզ : Այժմ երկուսուս
խնդրում եմ Ձեզ, որ բարեհաճիք յայտնել թէ ի՞նչ են Պետերբուրգի Կայսերա-
կան Ակադեմիայի պայմանները բառարանիս հրատարակութեան համար՝ թէ՛
նրաթուղիներ և թէ՛ գրքի բովանդակութեան վերաբերեալ : Կանխաւ պարտք եմ
համարում յայտնել թէ ի՛մ կողմից ամէն պատրաստակամութիւն կայ այնպէս
ձեւաւորելու գիրքը՝ որ առանց մնասելու բովանդակութեանը՝ յարմարուէր
Ակադեմիայի պահանջներին : Գալով ուստական լեզուաբանական գործերից
օգտուելու հարցին, որի վրայ յատկապէս պնդում էք Դուք Ձեր տուած միա-
յականի մէջ, գոթախտաբար ա՛յս կարող եմ տեսլ որ իմ ուղարկած մասում
ըստ պատահման միայն չեն դանուել ուսւ ազգրի բներից օգտուած մասեր, թէ
ոչ նոցանից գոնէ մի մասը ծանօթ է ինձ, ինչպէս Պատկանեանի, Էմ ինի, նաև
Ձեր գործերից մի մասը : Մնացեալը մտադիր եմ լրացնել, մանաւանդ եթէ պա-
տիւ ունենայի ստանալու Ձեզնից նոցա ցուցակը, որի համար յատկապէս խնդ-
րում եմ :

Յուսարով թէ շուտով կ'ստանամ նամակիս նպատաւոր պատասխանը՝

Եմ միշտ Ձերդ

Հ. Աճառեան

1908 Հոկտ. 8

Թեմական Դպրանոց

Նոր-Նախիջևան

* * *

Մենք ուրախ կը լինէինք, եթէ Հ. Աճառեանի օրինակով կարողացանք
ցոյց տալ Մեյլի հետեւեալ տողերի անկեղծութիւնը. «Ես հպարտ եմ, — գրել
է նա Մեարոյ Մարտեանցին, — որ եղել եւ մնացել եմ բարեկամը այն բոլոր
աշակերտներս, որոնց հետ աշխատակցել եմ» (22 Մարտ 1913 թ.)⁴⁶ :

Ստորեւ հայերէն թարգմանութեամբ եւ անհրաժեշտ ծանօթագրու-
թիւններով ներկայացնում ենք Հ. Աճառեանի իննը նամակ ուղղուած Մեյլին :
Թիւ 1, 2, 3 եւ 8 նամակներն առաջին անգամ հրատարակել ենք Երեւանում,
«Բանրեր Հայաստանի արխիւների» հանդէսի 1966 թուականի 2րդ համարում :

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ — ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԹՈՒԱՆ ՄՆՅԷԻՆ

«Փարիզից եւ Սթրասպուրգից յետոյ ես միշտ շունենայով, քննել եմ բոլորը⁶ : Բնականաբար մեք
թղթակցութիւն ունեցայ իմ երկու ուսուցիչների՝ այդ ամբողջ թղթակցութիւնը գիտական հարցերի
Մեյլի եւ Հիւզումանի հետ : Եթէ նրանց դրած նամակ- շուրջն էր : Ամէն սեղան, որ մի նոր ստուգարանու-
նէրը պահած լինէի, մի ահապէն գիտական հասարակութիւն էի մտածում, դիմում էի նրանց եւ նրանց կար-
կը լինէր : Բայց ես նամակ պահելու սովորութիւն ծիրը հարցնում» :

(Հ. Աճառեան, «Կեանքիս յուշերից», էջ 275) :

ԹԻՒ 1

Էջմիածին, 5 Ապրիլի 1900

Իմ շատ սիրելի եւ հոգեհարկ Ուսուցիչ¹,
Ներեցէք ինձ, եթէ այս անգամ մի քիչ ուշ եմ պատասխանում ձեր
վերջին նամակին :

Ուրում էք իմանալ, թէ Կոմիտաս վարդապետը ե՞րբ է մեկնելու
Փարիզ : Ես հարցրեցի նրան, սակայն դժբախտաբար նա եւս ոչինչ չգիտի այս
մասին, թէեւ վստահ է, որ ինքն այս տարի մեկնելու է : Նրա մեկնումը կա-
խում ունի Երածշտական ընկերութեան այն խորհրդակցութիւնից, որ Յուլիան-
հանդէսի առթիւ կայանալու է Փարիզում : Նա կարծում է, թէ դուք իրենից
ուսուցիչ տեղեակ կը լինէք այս մասին : Յամենայն դէպս ընդունեցէք նրա ամե-
նասիրալիր ողջունը :

Ես դեռ չեմ ստացել Mémoires—ի (Տեղեկագրի) այն համարը, որ
տեղ լոյս է տեսել ձեր յօդուածը «տերութիւն» բառի մասին² : Ի միջի այլոց,

* Ձեռքիւ խոստովանութիւնը նիշտ է. պատճառաբանութիւնը՝ կեղծ :

⁴⁶ Երեւան, Մատենադարան, Մեարոյ վ. Մատենաեանցի փոնդ :

¹ Փարիզում հնագրավաճառից գնում մի գրքի միջից այս նամակի փրանսերէն
բնագիրը յայտնաբերել ու երեւան՝ Գրականութեան եւ Արուեստի բանգարանին է ուղարկել
Հրանտ Թորոսեանը :

² Հայերէն «տերութիւն» բառի ստուգաբանութեան եւ ուղղագրութեան մասին Մե-
յի յօդուածը լոյս է տեսել Փարիզի Լեզուաբանական ընկերութեան տեղեկագրում, հատ-
ժԱ. 1900. էջ 401 : Մեյլին սպացուցում է, որ այս բառի հնագոյն եւ նիշտ ուղղագրութիւնը
է—ով է :

Բամաջեանի³ միջոցով ևս վճարեցի 1899 և 1900 թուականների անդամայր-
ճարներս⁴:

«Բանասէր»-ում կարգացիք անշուշտ իմ յօդուածը, որտեղ տրուած են
փերակ, երաժիշտ, նաժիշտ և առոյգ բառերի ստուգարանութիւնները: Կ'ու-
զէի ձեր կարծիքն իմանալ զբանց մասին:

Հաճեցէք ընդունել, Պարոն և և իմ սիրելի Ուսուցիչ, խորին յարգան-
քիս հաւաստիքը: Ընդունեցէք նաև իմ անկեղծ շնորհաւորանքը Ձատկի ասնի
ասթիւ:

Ձեր յայտ անձնուէր աշակերտ՝

Հ. Աճառեան

Երեւան, Գրականութեան և արուեստի թանգարան, Հրանտ Թորոսեանի ֆոնդ:
Բնակիք, ինքնակալ:

ԹԻԻ 2

21 Մայիս 1902

[Էջմիածին]

Իմ շատ սիրելի և հոշակաւոր Ուսուցիչ,

Ձեզ յայտնելու եմ բաւականին հետաքրքրական մի բան: Ինձ վիճակ-
ուեց յայտնաբերել Եղիշիկի միակ ձեռագիրն աշխարհում, որ մի ժամանակ
գտնուած էր Զմիւռնիայում և իբր աչրուել էր հրդեհի ժամանակ⁵: Ես և Պրն.
Գալուստ Տէր Մկրտչեանը արդէն վերջացրել ենք համեմատութիւնը վենետի-
կի հրատարակութեան հետ: Ունենք շատ տարբերակներ, որոնց մեծ մասն ա-
նարժէք է, սակայն այսուհանդերձ կայ 200 ուղղում, որ պէտք է մտցնել բը-
նագրի մէջ: Այս համեմատութիւնը տուեց, ի միջի ալրոց, լեզուարանական եր-
կու բան: Մէկը ապաստամբ ձեւն է, փոխանակ ապաստամբ: Հայերէնում դոր-
ժածականը վերջին ձեւն է. բայց Եղիշիկը չորս անգամ ունի ապաստամբ, եր-
կու անգամ զապաստամբ, մէկ անգամ ապաստամբիլ, երկու անսամ ապաս-
տամբաւ իւրն: Սակայն ոչ մի օրինակ չկայ առանց ար: Դա արդէն սպասելի էր
իրաներէն ձեւի հետ համեմատութիւնից: Ուրեմն ար անկումը հաւաստի է:
Դրանից պէ՞տք է եղբակացնել արդեօք, թէ ինչաւի համեմատութիւնը նոյն-
պէս պարս. xandaի հետ, որ Հիւպամնը մերժել է ար անկման պատճառով,
ընդունելի է: Յամենայն դէպս այս բանը նշելի է:

3 Կ. Յ. Բամաջեանը ժամանակին Փարիզում լռյս տեսնող հայագիտական «Բանա-
սէր» հանդէսի հիմնադիր—խմբագիրն է եղել:

4 Որպէս Փարիզի Լեզուաբանական ընկերութեան անդամ:

5 Խօսքը հայ դասական մատենագրութեան 5րդ դարի հեղինակ Եղիշիկ Կողբացու
մատենի ձեռագրի մասին է, որն առելի շատ յայտնի է Եղծ պատմոց խորագրով եւ որի մի-
ւի ձեռագիրն այժմ գտնոււմ է Երեւանի Մատենադարանում: Մատենի առաջին հրատարա-
կութիւնը տեղի է ունեցել 1762 թ., Զմիւռնիայում, վերջին՝ գիտական հրատարակութիւնը
եւ փրանսերէն բարգմանութիւնը հարուստ ծանօթագրութիւններով կատարուած են Մեյլէի
աշակերտ Լուի Մարիէի եւ վերջինիս աշակերտ Շ. Մերսիէի կողմից (Փարիզ, 1959 թ.):

Միւսը հետեւեալ նախադասութեան ուղղումն է: Եղնիկը (բոս հրատարակութեան) գրում է. երբ մենք ասում ենք «սիւք շնչէ, ասորնեայք ասեմ այս շնչէ»: Սրանից եղբակացնում էին, թէ այսը ասորական բառ է, որ նշանակում է «բամբ»⁶, այնուհետեւ նշանակել է «սատանա»: Սակայն դուք թո՛նջ կ'ասէք, եթէ ձեռագիրն ունի ասորնեայք, որ հրատարակիչն ընթերցել է ասորնեայք, սխալուելով ստորի ձայնի ներքի մտախրութիւնից: Յամենայն դէպս, ասորնեայք բառն այլուր գոյութիւն չունի, եւ նն միանգամայն անբացատրելի էր: Առատաւելն կարող էր լինել ասորնեայք, բայց ոչ երբեք ասորնեայք: Ուղղումը նախադասութիւնը լեզուարանական մի տուեալ է պարունակում. մենք (գրում է Եղնիկը եւ ուղում է նշել հիւսիսի կամ Միջին Հայաստանի Հայերին) ասում ենք սիւք շնչէ, միջդեռ հարաւի Հայերը (ասորնեայք) ասում են այս շնչէ:

Մեր համեմատութիւնը հրատարակութեան հետ, ձեռագրի նկարագրութիւնը եւ այլն, որոնք միասին կազմում են մի երեսուն էջ, լոյս կը տեսնի կա՛մ «Հանդէս»ում⁶, կա՛մ ZAPh—ում (Zeit. f. Arm. Philol.). որ միշտ ստանում եմ որպէս բաժանորդ:

Կանխապէս շնորհակալ եմ Ղարաբաղի բարբառի մասին ձեր ուսումնասիրութեան⁷ առանձնատիպի համար, որ մտադիր էք ինձ ուղարկել:

Ահա ամառ է: Գիտեմ, որ դուք ուղում էք սրել տեղ գնալ՝ մի քանի օր անցկացնելու եւ հանգստանալու համար: Այժմ մեր ամբողջ ընտանիքը էջմիածնում է: Ես հիմա ուսուսչպատակ եմ: Մենք ձեզ հրաւիրում ենք Կովկաս. դուք սիրում եք մեր երկիրը. այստեղ կը գտնէք թէ՛ հանգիստ եւ թէ՛ գիտական օգուտներ: Կը մնաք մեր տանը, ուր կը գտնէք արեւելեան շատ սրտարաց ընդունելութիւն: Եթէ ուրիշ մտադրութիւն չունէք եւ եթէ այսքան երկար ճանապարհորդութիւնը ձեզ շատ չի յոգնեցնի, ինդրում եմ՝ շմերժէք մեր հրաւէրը⁸:

Հաճեցէք ընդունել, իմ շատ սիրելի Ուսուցիչ, խորին յարգանքիս հատատիքը:

Ձեր անձնուէր աշակերտ՝
Հ. Աճառեան

Երևան, Գրականութեան եւ արուեստի թանգարան, Հ. Աճառեանի ֆոնդ: Յաղ: Բնագիր, ինքնագիր: Ուղարկել է Հայկ Պէրդէրեանը:

6 Հ. Աճառեանի և Գ. Տէր Մկրտչեանի ուսումնասիրութիւնը՝ «Քննութիւն և համեմատութիւն եզնկայ եռազդեա ձեռագրին», լոյս է տեսել Վիեննայում 1904 թ.: Նախ «Հանդէս Ասորեայ»ում, այնուհետեւ առանձին գրքոյկով (32 էջ):

7 "Journal Asiatique" հանդէսում (1902, էջ 561—571) Մեյէն փրանսիէն յեղուով ամփոփել է Հ. Աճառեանի «Քննութիւն Ղարաբաղի բարբառին» ուսումնասիրութիւնը (1901 թ.): Այստեղ խօսքը Մեյէի այդ ընդարձակ գրախօսութեան առանձնատիպի մասին է:

8 Մեյէն 1902 թ. չի կարողացել ընդունել Հ. Աճառեանի հրաւերը: Սակայն նա իր աշակերտին Շուշում այցելել է 1903 թ. ապրիլի ամսանը: «Կեանքիս յուշերից» մտատնում Հ. Աճառեանը գրում է (էջ 98—99). «... ես դեռ նշանուած չէի եւ ծնողներս Շուշում էին, երբ Մեյէն յայտնեց, թէ ամառը ուզում է Շուշի գալ, մնալու համար մի քանի օր մեզ մօտ: Ուրախութեամբ ընդունեցի: Մեյէն իբրև մեր տունը. մայրս ամենաբնօտի կերակուրներն էր

ԹԻԻ 3

Շուշի, 23 (Հ. ա.) Մեղ. 1902

Իմ սիրելի և մեծանուն Ուսուցիչ,

Հենց նոր ստացայ ձեր բացիկը, մատենախօսականը⁹ և Գասական հայերէնի համեմատական ֆերականութեան ուրուագիծը¹⁰: Այս բոլորն ուզարկը-

պատրաստում օտարազգի ուսուցչին դուր գալու համար: Մեյէն նաշակում էր և մօրս հայերէն ասում:

— Շատ լաւ է:

Սրանից եւ զբարեւ ձեզ ողջոյնից դուրս ոչ մի հայերէն բան չէր խօսում: Մեյէն կազմել էր իր հայերէն ֆերականութիւնը եւ ուզում էր, որ ձեռագիրը միասին կարգայինք նախքան տպագրելը, որպէսզի երէ պատահական սխալներ սպրդած լինէին, ուղղէինք: Այս աշխատութիւնը կատարեցինք: Ամէն օր բարձրանում էինք ֆերձը: Ի՞նչ հաճոյք էր գգում՝ դիտելով ընդհանուր տեսարանը, մանաւանդ երբ տեսնում էր կամաչներին մէջ բազում կարմիր կտուրները: “Mais c'est tres joli!”, բացականչում էր շարունակ:

Մի օր գնացինք Կիտաղբիւրի անուառը ման գալու: Այն ժամանակ ես կատակածում էի, թէ բոֆախտ ունեմ: Մեյէն բոֆախտաւոր ընտանիքի սերունդ էր և ինքն էլ բոֆախտ ունէր: Խորհուրդ տուեց ինձ (իրբեւ մասնագէտ), ձեռնափայտը մէջքի վրայ հորիզոնածեւ դրած՝ երկու բեւերի տակ անել եւ այդպէս ման գալ մի քանի ժամ այդ անտառում, որի բոյրը բուժիչ է յատկապէս բոֆախտի: Մի երեկոյ, երբ բուլվարում ման էինք գալիս միասին, բաֆում ցոյց տուի նրան նստարանի վրայ նստած Արուսեակին, որի հետ դեռ ծանօթ չէի եւ ասացի, թէ «Այդ օրիորդը իմ ապագայ կինը պիտի լինի»: Դիտեց, հուսանեց եւ գոհ մնաց:

Մեյէի գալուստը ուրախութեամբ դիտուեց ամբողջ Շուշում: Երբ մենք միասին ման էինք գալիս բուլվարում, բոյրը հետաքրքրութեամբ դիտում էին, և որովհետեւ Մեյէն միշտ կրում էր նամփոթզական փակ սեւ ակնոց, ասում էին. «Այս կոյր մարդը Անտանի սրտփեսայն է»:

Ընկերներս մի ցերեկոյր կազմակերպեցին թեմական դպրոցում Մեյէի պատուին: Հաւաքուեցին մի խումբ երիտասարդներ եւ օրիորդներ և նրա ներկայութեամբ պարելով, ցուցադրեցին կովկասեան ամենաուրբ եւ դժուար պարերը, որոնց այնքան հմուտ են շուշեցիք: Մեյէն շատ հաւանեց եւ ասաց. «Հայկական պարերը եւրոպականներից շատ աւելի աշխոյժ են եւ մանաւանդ շատ աւելի լին են մանր նրբութիւններով»: Մեյէն սիրահար էր եւրոպացիների համար. Գարիբալդի ամեն առաջում մի ժամ դաշնամուր էր անում. այդ ցերեկոյրի միջոցին էլ երկար ժամանակ անց դաշնամուրի վրայ: Շուշեցիք շատ են սիրում բառ անել. չկայ տուն, որ մի բառ անող չունենայ. նրանց բոլոր նուագած եղանակները սովորութիւն է պարսկական կոչել, բայց այդ բոլորը հայկական են: Մեյէն լսում էր այդ բոլորը եւ թէեւ միօրինակ էր գտնում, բայց շատ նուրբ եւ երանգաւոր:

Երկու շաբաթ Մեյէն մնաց մեզ մօտ, ապա գնաց Էջմիածին, ձեռագրերի վրայ ուսումնասիրութիւն կատարելու համար: Վերջին անգամն էր, որ տեսայ իմ ուսուցչին»:

9Մեյէի գրախօսութիւնը Հ. Անտանի «Բնութիւնը Գարաբաղի բարբառին» ուսումնասիրութեան մասին:

10 Մեյէի “Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique” (Վիեննա, 1902 թ.) աշխատութիւնը: 1936 թ. Լ. Մարիէտի եւ այժմ յայտնի լեզուաբան է. Բենվենիտտի աշակցութեամբ (Մեյէն անդամաւոյժ էր եւ գրքէ կոյր) հեղինակը պատրաստել է այս աշխատութեան երկրորդ, բարեփոխուած հրատարակութիւնը, որ գրախօսութեան վաճառքի է հանուել հեղինակի մահուանից մի քանի շաբաթ յետոյ միայն:

ւել է իջմիածին եւ այնտեղ մնացել որոշ ժամանակ : Եւ վերջնականապէս Հե-
 աացայ իջմիածնից եւ Շուշի եկայ որպէս Հայոց լեզուի ուսուցիչ : Հայկական
 թեմական դպրոցում : Փոստից գրաւոր պահանջեց ինչ որ ուղարկուել է իմ
 անունով : Այսպիսով ձեր բացիկի պատասխանը մի քիչ ուշացաւ : Չկարողա-
 ցայ նաև վանքի գրադարանին յանձնել ձեր Քերականութեան¹¹ երկրորդ օրի-
 նակը . յաջորդ փոստով կ'ուղարկեմ : Ինչ վերաբերում է ինձանից ձեր խնդ-
 րած գրախօսութեան, թերեւս այն Հրատարակեմ «Մուրն»ում . գիտէք որ Հա-
 յերէն պարբերականներից սա լուսագոյնը եւ ամենից շատ կարգացուողն է .
 այդպիսով գրախօսականը գրանում աւելի կը տարածուի, քան այլուր¹² :

Ասացայ նաև ձեր աշակերտների Հրատարակած "Mélanges linguistiques"ը
 («Լեզուաբանական յօդուածների յօրելանական ժողովածու») :¹³ Շատ եմ գա-
 ւում, որ սպ. իմ նախկին դասընկերները բնաւ չեն ցանկացել ինձ տեղեկացր-
 նել իրենց մտադրութիւնը : Եւ շատ էի ուզում ներկայ լինել նրանց շարքում,
 սրանք այս ժողովածուով ուզում են ձեզ յայտնել իրենց երախտագիտութիւ-
 նը : Բայց առիթն անցաւ : Կարծում եմ, որ շատ շանցած՝ դարձեալ կ'ունե-
 նանք այդպիսի մի պատեհութիւն :

Այժմ աշխատում եմ յետին ժամանակներում գրուած մի փոքրիկ բր-
 նագրի վրայ : Դա խարբերոցի ասորի մի քահանայի վկայարանութիւնն է¹⁴,
 որ շատ Հեռաքրքրական է պատմութեան, թուրքական ու արարական լեզուա-
 բանութեան, միջին Հայերէնի եւ այլ տեսակէտից :

11 Մեյլի "Esquisse..."ը :

12 Մեյլի "Esquisse..."ի մասին Ղ. Աճառեանն իր գրախօսութիւնը հրատարակել է
 «Հանդէս Ամսօրեայ»ում, 1903, ք. 4, էջ 105—110 :

13 Եւրոպական երկրներում համալսարանի մի խումբ շրջանաւարտներ իրենց եւ-
 տազօտական յօդուածներից կազմուած ժողովածուն ձօնում էին իրենց ուսուցչի յօրելանին :
 Մեյլի առաջին աշակերտները Ռ. Կոքիոյի եւ Ժ. Վանտրիլէսի նախաձեռնութեամբ 1901 բուս-
 կանին իրենց յօդուածներից պատրաստում են մի համեստ հատորակ "Mélanges linguistiques
 offerts a A. Meillet" խորագրով եւ ձօնում նրա դասախօսական առաջին տասնամեակի յիշատա-
 կին : Մեյլն ժողովածուն ստանում է 1902 ք. Յուլիսին, իր ծննդավայր Շաքոմեյանում :
 Այս անակնկալը խորապէս յուզել է ուսուցչին, եւ հետագայում նա բազմիցս իր երախտագի-
 տութիւնն է յայտնել իր գիտնական աշակերտներին :

Մեյլն իր ուսուցիչների, գիտնական դարձած նախկին աշակերտների, յայտնի լեզ-
 ուաբանների կամ բանասէրների, լեզուաբանական հանդէսների յօրելանների պատուին յա-
 նախ է կազմակերպել այդպիսի ժողովածուներ, կամ յօրելանի մասնագիտութեան մերաբեր-
 րող յօդուածով մասնակցել է նման ժողովածուների : Սակայն ուրիշներին միայն մէկ անգամ
 է յաջողուել նրան մատուցել այդ յարգանքը : Ան այս միակ առիթը ակամայ բաց բողոքնու
 համար է իրաւամբ զանգատում Մեյլի աւագ եւ ամենատիրելի աշակերտներից Ղ. Աճառ-
 եանը :

14 «Պատմութիւն եգիպտական քահանայի», Աբարսա, 1908, քիւ 9, էջ 812 : Ղ. Աճառեա-
 նի ուսումնասիրութեան մէջ այս քահանայի մասին կարգում ենք. «Բնիկ խարբերոցի և նոյն
 ֆաղափ տիրամայր Ս. Աստուածածին ասորի եկեղեցւոյն քահանան էր . ասորերէն լեզուով
 կը կոչուէր Բագան Էլիա... Նա տեղակ էր չորս լեզուի, այն է ասորերէն, արաբերէն, մա-
 րնեբրէն (արաբերէն բարբառ) եւ հայերէն... Ճանօք էր մահմետական գրականութեան...
 Գրուածում կան այլալեզու հատուածներ...» (Աբարսա, 1908, էջ 818—819) : Հենց այս
 հատուածները եւ ասորի քահանայի արտասանութիւնն են հետաքրքրական լեզուաբանութեան
 տեսակէտից : Ղ. Աճառեանը, ըստ իր սովորութեան, դրել է ուսումնասիրութիւնն արտե-
 յու տեղը եւ բուականը՝ Շուշի, 1903 Մայիս 8 :

Սկսեցի պատրաստել նաև Կ. Պոլսի բարբառի ուսումնասիրութիւնը¹⁵. զա կը լինի հենց ձեր ցանկացած ծրագրով :

Դժբախտաբար Գերմանիայից զեռ ոչ մի պատասխան չեմ ստացել, ո՛չ էլ զհնդերէն յոն գրքերը, որոնք անհրաժեշտ են Vendida¹⁶—ի ուսումնասիրութեան համար : Շուտով կ'աւարտուի մի մեծ աշխատանքի տպագրութիւնը (տարբեր ժամանակներում գրուած բնագրեր, 1150—1840), որ պատրաստել եմ Պրն. Մանանդեանի հետ : Մտտ օրից կը ստանաք¹⁶ :

Իմ հասցէն է՝ Շ. Աճառեան, Շուշիի թեմական դպրոց, Ելիզապէթփոլի նահանգ :

Ձեր անձնուէր աշակերտ՝

Շ. Աճառեան

Նոյն տեղում :

Յ. Գ. Խնդրում եմ ինձ յայտնել, թէ «Թուրքերէնի փոխառեալ բառեր հայերէնի մէջ» աշխատութիւնս¹⁷ կը վաճառուի՞ արդեօք Եւրոպայում : Հարիւր երեսուն օրինակ ունեմ. կարո՞ղ եմ 20—30 օրինակ վաճառքի ուղարկել Պրն. Բույոնի դրախտութիւն :

Յ. Գ. «Աշակ»ում մի գրախօսութիւն կայ ձեր Բերականութեան¹⁸ մասին. եթէ ցանկանում էք, յաջորդ նամակումս ներքակ կ'ուղարկեմ :

Յ. Գ. Ստանալով ձեր բացիկը՝ պատում եմ նամակիս ծրարը եւ շարունակում :

Հայերիս համար անտարակոյս մեծապէս հաճելի է լսել, որ դուք շատ էք զբաղում հայերէնով¹⁸ : Արդէն կարդացել եմ ձեր Բերականութեան կէսը եւ կարող եմ ասել, թէ դուք ի՛նչ օգուտ էք տուել հայապէտ լեզուարաններին, մանաւանդ հայագիտի հայապէտներին : Ձեր աշխատանքը կատարուած է Գերմանացու գիտական ու յուրջ մեթոդով եւ Թրանսիացու պարզութեամբ ու յստակութեամբ : Ձեզ շնորհակալ ենք դրա համար :

Սկսեցի Կ. Պոլսի բարբառի լիակատար ուսումնասիրութիւնը : Դա որոշ շափով օգտակար կը լինի անշուշտ արեւմտահայերէնի փերականութեամբ զբաղուողներին, գուցէ եւ ձեր ուսումնասիրութեանը : Սիրով եւ շատ մեծ բաձոյրով կ'օգնէի ձեզ :

Վերջին ժամանակներս ես եւ Մանանդեանը մտադրել էինք Ելիզէի¹⁹ գիրքը հրատարակել : Էջմիածնում կան տասնի շափ ձեռագրեր : Բայց կատար-

15 Սակայն ուսումնասիրութիւնը՝ «Թեմութիւն պոլսեայ բարբառի», լոյս է տեսել 1941 թ., Երեւանում :

16 «Հայոց նոր վկաները» (1155—1843), Վաղարշապատ, 1904 թ. Յ. Մանանդեանի հետ միասին : ԼԻԵՅԷՆ ստացել է այդ գիրքը եւ դրա մասին հրատարակել գրախօսութիւն (Revue Critique..., հատ. 58, 1904, 959—960) :

17 Լոյս է տեսել Մոսկուայում, 1902, 381 էջ (Էյմիենեան ազգագրական ժողովածու, Գ) :

18 ԼԻԵՅԷՅԷՆ «Esquisse...»—ի մասին :

18ա. 1902 թ. ԼԻԵՅԷՆ դատաւանդում է հայերէն եւ մինչ այդ արդէն հրատարակել էր հայագիտական բազմաթիւ յօդուածներ :

19 Վարդանանց պատերազմի յայտնի պատմագիրը :

ուելլիք աշխատանքը մեզ երկար թուաց²⁰ : Մենք արդէն հրատարակել ենք քրն- նական մի մեծ բնագիր²¹, և եթէ խորաբանչիւր լեզուարան նոյնքան աշխա- տանք կատարէր, բաւական էր :

Անձեւացեաց ձեռագիրը²² կորած է : Հարցում արուեց «Բարձրագիւղ»- ում, 1897, էջ 46, բայց ոչ ոք չկարողացաւ տեղեկութիւն տալ : Քանի որ ձե- ուագրի առաջին սեփականատէրը Սրբ Չատուայթ անունով մի անգլլացի էր²³, կարծուում է, որ այն հիմա էլ գտնուում է ինչ-որ Անգլլացու գրադարանում, որ տեղեակ չէ իր ունեցած արժէքին, որպէսզի այն յայտնի դարձնի գիտական աշխարհին : Նոյն հարցով ևս դիմեցի նաև Գալուստին²⁴, բայց նա իմ գիտցա- ծից աւելին չգիտի այս մասին :

Քանի որ այժմ Շուշիում եմ (Ղարարացի բարբառի կենտրոնում, որ- տեղ, ի միջի ալլոց, շարունակում եմ լեզուարանական ուսումնասիրութիւն- ներս), հանդիպեցի նախկին Ստեփան սարկաւազին, որի հետ ծանօթուցել էք իջմիածնում : Առացի, որ դուք յաճախ էք յիշում իրեն : Սրտագին բարեւում է ձեզ : Նա այժմ Բենիկ վարդապետ²⁵ է կոչուում ևս դպրոցի տնօրէնն է :

Մի ուրիշ հարց, բայց ներեցէք ինձ, եթէ այս մէկը լեզուարանական չէ, այլ դրամական : Այստեղ, մեր դպրոցում ուսուցիչներին աշխատամարձը տարեկան 30 ուրլի է մէկ ժամ դասի համար, բայց որեւէ համարարանից վկայական ունեցողներին 45 ուրլի 15 կողէկ է : Ինձ կարծում են Փարիզից վկայեալ, մինչդեռ ևս վկայական կը ստանամ, երբ աւարտական աշխատանք ներկայացնեմ : Քանի որ անհրաժեշտ գրքերը չեմ ձարում *Vendider!*— ուսում- նասիրութիւնս աւարտեալ համար, ուստի չե՞մ կարող արդեօք իմ հրապար-

20 Մեյէն ևս 1900ական քր. մտադրել է հրատարակել եղիշէի «Պատմութեան» բնական բնագիրը : 1903 ք. Մայիսի 10ին Գ. Տէր-Մկրտչեանին գրած մի նամակում կարդում ենք. «Ես անպայման զաւու եմ էջմիածին : Բայց ուզում եմ լա օգտագործել այն երեք շա- բաքը, որ անցկացնելու եմ այնտեղ : Նախ՝ մտադրել էի պատրաստել եղիշէի բնական հրա- տարակութիւնը, բայց «Պատմագիրք Հայոց» մեծ մատենադարի ազգարարութից յետոյ բնա- կանարար հրատարակեցի այդ մտքից» (Մատենադարան, Գ. Տէր-Մկրտչեանի փոնգ) :

21 Նկատի ունի «Հայոց նոր վկաները» :

22 Եղիշէի պատմութեան Անձեւացեաց կոչուող ձեռագիրը, որից կոտորուած է ա- ուղջին սուղագրութիւնը Թէոդոսիայում 1861 ք. :

23 Եղիշէի պատմութեան 1861 ք. առաջին հրատարակութեան ներածութեան մէջ և. վ. Գալուստեանը այս Անգլլացու մասին գրել է. «Էիւլ եղիւ մեզ հանաչել անդամոր (ի Փարիզեցուցն քաղաքի) զհնատէր ոմն այր պատուական Սրբ Չատուայր անուն, որ անտի ան- ցանէր ի դարձին յԱրեւելից ևս բարձեալ րեւեր նախորդին բազում հնութեանց, զորս ամ- բարեալն էր ի մերոց ևս յայլոց կողմանց Ասիացոց աշխարհին» : Աւելի մանրամասն տե՛ս և. Տէր-Միմասեան, «Եղիշէի վասն վարդապետայ ևս Հայոց պատերազմին», Երեւան, 1957, էջ XVI—XVIII : Անձեւացեաց ձեռագիրը մինչև այժմ էլ յայտնաբերուած չէ :

24 Գալուստ Տէր-Մկրտչեան (Միսրան) :

25 Վարդապետ ձեռնադրուելիս, Հայոց եկեղեցու սարկաւազը հրատարում է իր աշխարհական անունից ևս որեւէ սրբի անունն իրեն ընտրում է որպէս քահանայութեան ա- նուն : Բենիկ վարդապետը յայտնի է Հայոց եկեղեցու վերաբերեալ հրապարակախօսական յօդուածներով ևս գրեյլկներով : Վերջում դարձել է աշխարհական :

կամ աշխատութիւններէց մէկը, օրինակ՝ «Լազերէն լեզուն» ներկայացնել՝ հնարաւորին չափ շուտ վկայական ստանալու եւ «չրոնուելու» համար :

Ձեր աշակերտ՝

Հ. Աճառեան

[Յ. Գ.] Աւելացնեմ, որ ես այժմ սուսահագասակ եմ : նոյն տեղում :

ԹԻՒ 4

13 Յուլիսի 1903

Թուրքի

Իմ շատ սիրելի Ուսուցիչ,

Երկար ժամանակ ձեզ նամակ չեմ գրում : Անշուշտ մտահոգուած էք իմ մասին : Իրականութիւնն այն է, որ կինս²⁶ այնքան էր հիւանդ, որ ամէն ինչ՝ դպրոց²⁷, դաս ու աշխատանք, նոյնիսկ կերակուր եւ քուն մոռացել էր : Այժմ նա փրկուած է մի ժամանակ հաստատ թուացող մահէն : Հիմա կարող եմ ձեզ գրել :

Ասեմ, որ այս տարի էլ մնալու եմ Թուրքիում : Մտադիր էի կոպիտ մեկնել, սակայն գրեթէ ամենօրեայ ջարդերն ու արտամքութիւնները հնարաւորութիւն չեն տալիս, որպէսզի իրականացնեմ մտադրութիւնս : Մեր սպարած քաղաքում 350,000 Թուրք եւ միայն 4,000 Հայ կայ : Թուրքերը շատ էին լարուած Հայերի դէմ, բայց քանի որ համարեա բոլոր Հայերը լաւ են զինուած, ուստի Թուրքերը վախեցան եւ ոչինչ չարեցին : Գիտէք անշուշտ, որ Պարսկաստանը յեղափոխականների կենտրոն է. այստեղ նրանք բոլորովին ազատ են. դէնք կրելը արգելուած չէ : Ամէն բոպէ զինուած ենք, նոյնիսկ ուսուցիչ ու քնելիս :

Ձեզ հետաքրքրող երկու փոքրիկ յօդուած ուղարկեցի «Հանդէս»ին²⁸. ցանկանում եմ ձեր կարծիքն իմանալ զրանց մասին : Պատրաստեցի նաեւ Թուրքիի հայերէն ձեռագրերի ցուցակը. մօտաւորապէս 150 ձեռագիր գտայ, որոնց 114ը ցուցակագրեցի եւ նկարագրութիւնը տպագրութեան համար ուղարկեցի «Հանդէս»ին²⁹ :

“Mémoires”—ներք³⁰ կանոնաւոր կերպով չեմ ստանում. նոր հասցէս չէի

26 Հ. Աճառեանի առաջին կինը :
27 1903 թ. Հ. Աճառեանը Թուրքի գաղափում հայկական դպրոցի ուսուցիչ է եղել :
28 «Հանդէս Ամսօրեայ» :
29 «Հանդէս Ամսօրեայ»—ինք : Հ. Աճառեանի կազմած «Նոստրալիս» ձեռագրացուցակը՝ «Յուցակ ձեռագրաց Թուրքիի», լոյս է տեսել «Հանդէս Ամսօրեայ»—ում, 1905, թ. 7, 1909, թ. 3 :
30 Mémoires de la Société de linguistique de Paris, յապատուած՝ MSL կամ M. S. L.

Փարիզի Լեզուարամական ընկերութեան տեղեկագիրը, որ Հ. Աճառեանն ստացել է որպէս ընկերութեան անդամ :

յախանել, և նոյնիսկ անդամաւճարս³¹ դեռ վճարուած չէ : Պատճառը կնոջն էրանդութիւնն է, որ ինձ կտրել էր արտաքին կեանքից : Այսօր ուղարկեցի անդամաւճարս և հասցէս : Ձեզ խնդրում եմ՝ իմ անունից խօսէք և ներողութիւն խնդրէք այս տկամայ ուշացման համար :

Նամակիս հետ կը ստանաք Եղնիկի վերաբերեալ իմ վերջին աշխատութիւնից մի օրինակ³², ինչպէս նաև անձանօթ խօսուածքով (բառ իս Լեհաստանի կամ Ռուսիոյ հայերէնով) գրուած ձեռագրից քաղուած բառերի մի ցանկ : Այդ բառերը շատ չեն. խնդրում եմ՝ գրանք ցոյց տաք լեհերէն և սովորեալ լեզուներէն իմացողներին : Շատ ուրախ կը լինէի, եթէ ունենայի այդ բառերի թարգմանութիւնը և սկզբնական ձևերը :

Սրտանց շնորհակալ լինելով ձեզ՝ խնդրում եմ ընդունել խորին յարգանքներիս հաւատարմութիւնը :

Ձեր անձնուէր աշակերտ՝

Հ. Աճառեան

31 Փարիզի Լեզուարանական ընկերութեան :

32 «Քննութիւն և համեմատութիւն եզնկայ նորագիտ ձեռագրի», որ նա հաւաքածարար հրատարակել է «Հանդէս Ամսօրեայ»-ում (1904, Բ. 1—9) : Կայ և տառնձին գրքոյնով, Վիեննա, Միքիբարեան տպարան, 1904, 32 էջ (Ազգային մատենադարան, ԻՐ, Գ-Տէր-Մկրտչեանի հետ միասին) :